



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Ե. Ի. Բ. Ա. Ղ. Ա. Բ. Ա. Կ. Ա. Ն.

36^{րդ} ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 28 ՆՈՅԵՄԲԵՐ 1887

ԹԻԻ 3900

ԱՊՐԱՊՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ կը հրատարակուի ի Կ. Պոլիս, ամեն շաբաթ օր, եւ ծեռքէ կը ծախուի 40 ՓԱՐԱՅԻ: Բաժա՜նորդագրութեան պայմանք են՝ Կ. Պոլսոյ համար տարեկան կէս եւ վեցամսեայ՝ քառորդ Օսմ. ոսկի: Գաւառաց համար 70 դր2: եւ օտար երկրաց համար 15 ֆըրանք: Բաժանորդագները դրկելու է առ մատակարարութիւն Սրեւելքի եւ Մասիսի, Կ. Պոլիս, Ղալաթիա, Նորատուրքեան խան:

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային Տեսութիւն. Ազգային գործեր
Արուեստաւորաց Միութիւն. (ՅՈՒՀԱՆՆԵՍ ՏԵՐ-ՍԱՐԳՍԵԱՆՅ):
Ազգային պատմութիւն. Դ. (ՎԱՐԳԱՆ Կ. ԱՐՍ-ԼԱՆԵԱՆ). (Վերջ):
Հրատէր մը յերկնից. Եղբօր նամակը. (Ա. ՀԱՄԲԱՐ-ԳԱՐՔԱՆ):
Անժէ. Գեղօն. (Թարգմ. Պ. ԹԵԼԼԱՆ):
Վեպ. Հայաստանի բարքեր. Սիսակ և Սոսոն, Բը-նութեան սոխակներ. (Ղ. Պ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ):
Քաղաւած Շաբաթական Լրոց. Արտաքին, Ներքին, Ազգային:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՌԻՐԱԹ 27 ՆՈՅԵՄԲԵՐ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. ԳՈՐԾԵՐ

Մեր վերջին խմբագրականներէ մի-ոյն մէջ խօսելով Պատրիարքական հրա-ժարման խնդրոյն վրայ, թուած էինք Տ. Յարութիւն Սրբազանի հրաժարման պատճառներն, եւ բացատրելով կայս-կառավարութեան ու Պատրիարքա-րանի փոխադարձ յարաբերութեան բը-նութիւնը, ցոյց տուած էինք թէ Պատ-րիարքական իշխանութիւնն ի՞նչ հի-մանց վրայ ամրացեալ էր: Անկէ ի վեր մեր ընթերցողը կարդացին մեր շա-բաթական լրոց մէջ թէ ի Բ. Դուռն Յանձնաժողով մը կազմուած էր առ կախ խնդրոց քննութեան համար եւ մեզ համար նպատաւոր տեղեկագիր մ'էր մատուցած Նախարարաց Խոր-հրդոյն: Թէև վճռական կերպով չենք գիտեր Նախարարաց Խորհրդոյ որո-շումն, այլ տարակոյս չունինք թէ նա եւս պիտի ճանչէ Պատրիարքարանի

պահանջմանց օրինաւորութիւնն: Առաջին օրէն համոզուած էինք թէ առ-կախ խնդիրը նպատաւոր վերադրու-կատողութեան պիտի ընդունին, քանի որ Բ. Դուռն վերահաստէր թէ Հա-յոց Պատրիարքարանն ի՞նչ հաւանաբ-մական զգացումներէ զրոյեալ կը պըն-դէր իւր առանձնաշնորհմանց՝ պահ-պանման համար որք դարերու նուի-րագործումն ունին: Արդարեւ, Հայ ազգին տիրաւոր եւ հպատակասէր ըզ-դացմունք ակներեւ ճշմարտութիւն մ'են յայտ օտմանեան կառավարու-թեան. հայերը միշտ ոյժերը դրած են երկրին տրամագրութեան ներքեւ եւ իրենց միջոցներով նպաստած են երկ-րին զարգացման եւ բարգաւաճման:

Ս. Պատրիարք Հօր հրաժարագրոյն շարժառիթներէն մին ալ, ցաւ է ըսել, Իզմիրի առաջնորդ Մելքիսեղեկ Սըր-բազանի ազգավնաս ընթացքն եղած է, Վերջին կաթողիկոսական ընտրու-թեանէն ի վեր, այս եկեղեցական, դա-ռն յուսախաբութեան մը յուր թե-լադրութեանց մատնուած, իրեն սկըզ-բունք ընտրած է առ ոչինչ դրել ազ-գին բոլոր շահերն եւ ազգին սեր-տըն արխնել, նորա ամենէն փափուկ զգացումները վիրաւորելով: Իւր այս ընթացք ցոյց կուտայ իւր անսահման փառամոլութիւնն, ինք որ, եկեղեցւոյ պաշտօնեայ, եկեղեցւոյ բեմէն պար-տէր քարոզել քրիստոնէական հեղու-թիւն եւ համակերպութիւն: Իբր ար-դիւնք այս փառամոլութեան, սխալ-ներէ ի սխալ կը գլորի եւ չենք գի-տեր թէ ո՛ւր պիտի հասնի իւր չարա-շուք գործոց ցանկն: Եւ իբր թէ մին-չեւ հիմա եղածներն բնաւ չը լինէին, իբր թէ հերիք չըլլար ընդդէմ Պատ-րիարքարանի իւր յայտ յանդիման ըմ-բոստութիւնն, ահա այս օրերս գե-րեզմանատան խնդիր մ'ալ յարուցած է Իզմիրի մէջ, ծանրակշիւ խնդիր որ բոլորովին սխալ գիւրքի մը մէջ թողու-Ազգը:

Մենք միշտ մեծ համակրութեամբ խօսած ենք Իզմիրի Հայ հասարակու-թեան վրայ եւ գոհունակութեամբ արձանագրած ենք նորա բոլոր ազգա-չէն ու հանրօգուտ գործերը: Բայց կը տեսնենք որ իրենց մէջ փոքր մաս մը կայ որ իրեն բան գործ ըրած է խա-ղալ ազգին հանդարտութեան հետ եւ որ իւր խորհուրդներով ու գիտումներ-

բով կը մղէ Իզմիրի առաջնորդն յա-րատելի իւր այս աղետալից շաւղի մէջ: Բարեբաղդաբար ժողովրդեան մե-ծամասնութիւնն իրապէս դժգոհ է իւր առաջնորդին և զնա չըջապատող խըմ-բակին մեքենայութիւններէն ու սադ-րանքներէն, եւ ընդհանուր շարժում մը կայ բողոքելու այս աղետալից աղ-ղութեան դէմ: Մեր կողմէ, կոչում կ'ընենք իրենց եկեղեցասիրութեան, կոչում կ'ընենք իրենց ազգասիրու-թեան. պէտք չէ որ գործիք ըլլան այս փառամոլ եկեղեցականին ձեռքը. պէտք է որ ձայն բարձրացնէ. թող վստահ ըլլան թէ բոլոր ազգը սրտե-ռանդն գոհունակութեան միմունջով մը պիտի ընդունի իրենց տնօրինութիւնը: Ազգին մէջ չեն պակսիր ուրիշ արժա-նաւոր եկեղեցականներ որք իրենց սրտին խորն ունին ուրիշ բան բայց ե-թէ կուտակեալ ատելութիւն եւ խուլ վրիժաւութիւն:

ՀԱՅԲ Ի ԼԻՎՈՐՆՕ

Տեղ մը յիշուած է թէ 1549 ին 150 հալք կային ի Լիվօրնօ, 1689 ին կը խնդրեն իրենց յատուկ եկեղեցի մը շինել, 1701 ին կը հիմնարկեն, 1714 ին կ'օծուի եկեղեցին յանուն Գրիգորի Լուսաւորչին, փառաւոր շէնք, ուր ինչ-ուան ժօտ ատեններ հայերէն ծիսով պաշտօն կը կատարուէր, ոյր ժողովր-դապետն կամ ըստ մեզ առաջնորդն է Տեմիրճեան Պետրոս վարդապետ, և հոգաբարձուք Պետրոս և Յովհաննէս Ագամեանք:

Եթէ մեզ տրուած տեղեկութիւնք ստոյգ են, այս տարի օգոստոս ամ-սուան մէջ յանկարծ այս եկեղեցւոյ վարագործը կը վերցուի Բօլ Երամ (Պօ-ղոս Երամեան) անուն աշխարհաքաղա-քացւոյ մը հրամանաւ, հայկական ե-կեղեցին կը լինի անդրալեռնական:

Կրնամք գիւրաւ հասկնալ թէ այս կարգի ձեռնարկ մը այդ անձն ինքնին կարող չէր ընել, առանց անշուշտ կեդ-րոնէն ներշնչուած լինելու, և ո՛ր գիտէ թէ տակաւին ինչքե՞ր պիտի տեսնամք, և որքան ազգային յիշատակներու կո-ընտրի ողբալու պիտի դատապար-տուինք հետզհետէ, շնորհիւ օտարոտի մեքենայութեանց, որք սակայն դժ-բաղդաբար կը քաջալերուին մեր ազ-գային իշխանութեանց մեղապարտ ան-փութութիւնէն:

ԱՐՈՒԵՍՏԱԽՈՐԱՅ ՄԻՈՒԹԻԻՆ

Տեղական Արուեստագործութեան վրայ մեր գրած վերջին խմբագրականն իւր ազդեցութիւնն ունեցած է արհեստաւորաց դասուն մէջ: Այլ եւ այլ անձերէ ստացած ենք նամակներ տեղական արհեստագործութեան արդի դրութեան վրայ: Պ. Յովհաննէս Տէր-Սարգսեանց ալ ծրագիր մը յօրինած է Արուեստաւորաց Միութեան մը կազմութեան համար, նշանաւորն ընտրելով իրեն «Քրք-տամբ երեսաց քոց կերեցես զհաց քո»:

Արուեստաւորաց Միութեան նպատակն է արուեստաւորները միացնել եւ ինքնօգնութեամբ ու համերաշխ ձեռնտուութեամբ աշխատաւոր ընկերին պարէն հայթայթել, հնարագիտական արտադրութեանց ազդիւրներ ստեղծելով, միմեանց մէջ տուր և տո խօսիլ տալ յարաբերութիւններ հաստատելով, արուեստաւորները խրախուսելով, եղած նորութիւնը եւ յառաջդիմութիւնը հանդիսադրութեամբ ընկերին ծանօթացընելով եւ այլ և այլ ինքնօգնական աջակցութեամբ արուեստից մղման պարտ ու պատշաճ միջոցներ ձեռք առնելով արնչաւի որչափ ներքէ հետզհետէ Միութեան շրջանակը:

Արուեստաւորաց Միութիւնն իւր մէջ կը կեդրոնացնէ արուեստից հնարից եւ վաճառականութեան ամեն ճիւղերը, նոցա արդիւնաւորութեան եւ գործադրման հարկ եղած բաժանմունքներն ըստ իւր յատկապէս զօնը զատելէ վերջ, որոց մէջ մի արհեստական ճիւղ իւր յատուկ խումբն եւ զինք ներկայացնող մարմինն ունենալով հանդերձ Արուեստաւորաց Միութիւնը կեդրոնացնող գերագոյն ժողովոյ մը ուղղութեան եւ հովանաւորութեան ներքեւ կը գտնուին, որուն նպատակն, սկզբունքն եւ յատկապէս առաջնօրէն ընդունած ըլլալով, ժամանակին պահանջմանց համեմատ ներմուծուիլ հարկ դատուած յաւելումներն եւ բարեփոխումներն ամեն տարւոյ վերջ կրնան առաջարկել եւ ի հարկին խորհրդակցիլ Միութեան կեդրոնական մարմնոյն հետ:

Գերագոյն ժողովն արուեստաւոր, հընարագէտ եւ վաճառական պատուաւոր եւ երեւելի տասն նրկու անձերէ կը բաղկանայ որք կ'ընտրուին քուէարկութեամբ արուեստաւորաց ամեն օթեակներէ եւ երեք ստորագրութեամբ պատուաւորութեան վճարագրով մը կը հաստատուին:

Սոցա պաշտօնն երեք տարուան համար է եւ ըստ Միութեան դրամական վիճակին պարտին (յապաւապս) ըստ արժանեաց վճարուիլ ընկերութեան արկղէն:

Սոյն տասն երկու անդամը կը բաղկանան Նախախաչէ, դեր-նախադաչէ, Ատենադարէ դեր-ատենադարէ, Գանձապետէ, դեր-գանձապետէ, Համարակալէ, Հաւաքիչէ եւ չորս Խորհրդականներէ որք ի հարկին բացակայ գտնուող դեր պաշտօնէից աշխատութիւնները կ'ստանձնեն:

Գերագոյն ժողովն ամեն ամսոյ մի որոշեալ այս ինչ օր, այս ինչ ժամուն նիստ կ'ընէ որոշեալ կեդրոնատեղւոյ մը մէջ ուր ներկայ կրնան գտնուիլ Միութեան օթեակներու գլխաւորներն, որք գործօն անդամի կատարեալ իրաւասութիւնն ունին ժողովոյ մէջ, նոյնպէս մտից տուն կրող պարզ անդամը որք թէպէտ պաշտօնապէս ձայն չունին գերագոյն ժողովոյ մէջ սակայն իրենց օթեակին պետէն կամ ժողովէն խօսելու ի-

րաւասութիւն խնդրելով՝ կրնան առաջարկ կամ դիտողութիւն ընելու Միութեան նիստերուն մէջ:

Գերագոյն ժողովոյ պաշտօնն է Արուեստաւորաց Միութեան (ըստ իւր յատկապէս զօնը) հարկ դատուած զանազան օթեակներն կազմակերպել, ըստ իւր սկզբունքն նոցա ուղղութիւնը տալ, հոգալով նոցա ընկերական պէտքերն ձեռք առնուլ Միութեան օգտին եւ յառաջդիմութեան հարկ դատուած միջոցները: Մէկ խօսքով Միութիւնը ներկայացնել, արուեստական ամեն ուղղութեանց նախագահել եւ ամեն ճիւղի օթեակներն իւր մէջ կեդրոնացնել:

Արուեստաւորաց Միութիւնն ըստ իւր յատկապէս հարկ դատուած զանազան արուեստական, հնարագիտական եւ վաճառականական օթեակներն ունի, որք կ'ընտրուին եւ կը վաւերացուին Միութեան գերագոյն ժողովէն եւ կ'ընտրեն իրենց այլ և այլ անդամներն իրենց տեսակին եւ ճիւղին մէջ: Սոյն օթեակը ընդ ունելով Միութեան նպատակ, սկզբունքն եւ յատկապէս իրենց ճիւղին հարկ դատուած արուեստական եւ յառաջդիմական ինքնօգնական եւ համերաշխ միջոցներն ազատապէս կը գործեն յօգուտ Միութեան, եւ իրենց ամեն գործառնութեանց մէջ համարաւոր են Միութեան Գերագոյն ժողովոյ: Նոյնպէս, իրենց հասոյթից հարկերին տասը Գերագոյն ժողովոյ տրամադրութեան վճարելու հարկադրեալ են: Ամեն ամիս որոշեալ օր մը նիստ ունին եւ երեք ամիսն անգամ մը իրենց գործառնութիւնը դրաւոր կերպով Գերագոյն ժողովոյ կը ներկայեն, նոյնպէս տարւոյն վերջ իրենց ընդհանուր համարը:

Արուեստաւորաց Միութեան անձնաւոր ընկեր իւր արուեստի ճիւղի օթեակին կը պատկանի, իւր անդամակցութիւն երկու անգամոց դրաւոր վկայութեամբ կ'առաջարկուի եւ օթեակէն քուէարկութեամբ կը հաստատուի: Իբր ծախք օթեակի պարտի տարեկան տասը Փրանք բաժնեգին վճարել իւր օթեակին որոյ փոխադարձ կ'ստանայ Միութեան արուեստաւոր անդամոց մի ցանկն եւ իւր ընկալագիր: Ընկերը պարտին ըստ կարելւոյն գնել իրենց պէտքերն սոյն ցանկին մէջ նշանակուած արուեստաւոր, հնարագէտ եւ վաճառական անդամներէ, որք փոխադարձաբար նոյնը պիտի գան իրենց կրկնել:

Միութեան վաճառող ընկերը պարտին իրենց ծախքը հարկերին երեքը պատկանած օթեակներն յատկացնել ի պէտս, ի խրախոյս եւ յառաջդիմութիւն իրենց արուեստական, հնարագիտական եւ վաճառականական ճիւղի:

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Դ.

(Շար. եւ վերջ)

Ուստի եւ Հայ ժողովուրդը պէտք է ներողամիտ ոգով լսէ ըննադատին եւ ըննադատութեան, եւ եկեղեցական իշխանութիւնը զայն քաջալերէ՝ իւր հաճութեամբ: Զոր օրինակ. մինչեւ 1870 տպագրուած ձառնցները կը պարունակէին Աւագ Ուրբաթու անուանեալ կտակը. բայց յայնմ-

հետէ Ս. Երուսաղէմի տպագրութեան ջրնաւեցաւ. Որովհետեւ, կ'ըսէ Միաբանութիւնը, չը կայ այն՝ ընտրելագոյն ձեռագրաց մէջ. ահաւասիկ սրբագրութիւն մը՝ արդիւնք բաղդատութեան, նոյն խի եկեղեցական գրոց մէջ: Միթէ պէտք չէ՞ ծափահարել այսպիսի գեղեցիկ գործեր թէեւ խաւարամտաց խտուելի: Առ հետաքրքրութիւն խնդրոյք կ'ըսեմ թէ այդ կտակն Աւետարանին կը հակառակի կէտ առ կէտ ուստի եւ եթէ չըլլար խի ընտիր գրչագրաց խնդիրն՝ պէտք էր էնթադրել:

Ունիթութեան խնդիրն — ահա թշնամին: Կիւրիկեան դարը շատ պարզեալէ տուած է ազգային օրինաց, պատմութեան, մատենագրութեան եւ եւ, որոց մի նմուշը կապկածել կը տայ, այնքան միամտօրէն, Հ. Սիլվան իւր «Շնորհալի եւ պարագայ իւր» ին մէջ:

Մեր եկեղեցին ազատական ոգով վարուած է ի սկզբանէ անտի. ուստի ձրի երթագրութիւն է լատինացեալ այդ Հարերուն՝ մեր պատմութեան մէջ գործել ուղած ինչ ինչ խեղաթիւրումներն: Հայ եկեղեցին երբեք չէ մտաբերած օրինակել Պապական եկեղեցւոյ եւ արարողութիւնն եւ կարգն եւ կանոնը. խարուկահանդէսներ չէ կազմակերպած ազատ քննողները վառելու համար. չ'արգիլեր ո՛ր և իցէ զբոց ընթերցումն որովհետեւ նա չէ «աղաքական» չ'արգիլեր ո՛ր և իցէ գրոց տպագրումն որովհետեւ չը համաձայնիր ազգէն ընդունուած գաղափարին կամ աւանդութեան. օրինակներ յիշուեցան արդէն առայս: Ուստի երբ անկերեւ է թշնամի գերիշնոր ինչ ինչ աղաւաղումները մեր մատենագրութեան մէջ, արժան է որ բողոքենք Պատկ. Կրօնական ժողովոյ որոշման եթէ չէ ընկերացած այն, ինչպէս ըսինք, ապացուցից ի վեր հանման յանձնարարութեան: Միթէ Դաշանց թղթոյն ընտրութեան մասին երջանկայիշատակ հայրապետը Մատթէոս բաւականացաւ բանիւ հակառակելով. ո՞չ ապաքէն փորձեց գրաւոր պատասխանել: Եւ երբ հակառակ եզրակացութիւնը յաղթեց չ'ընդունեցաւ միթէ ընտրութեան արդիւնքը: Սուտ պարծանք մը կամ փառք մը հաճիլ է միթէ պաշտպանել քանզի ազգային մատենագրութեան մէջ Գրեւորութեւ: Ո՞չ ապաքէն եւ ըննական ոգին էր որ որոշեց նոյն խի Ս. Գրոց Կանոնականաց եւ Անկանոններու հրատապ խնդիրն: Արդ մատչելով ի ընտրութիւն յօդուածին Տէր Եղիշի կը նշանակեմ թէ 1. Յոյժ գովելի է նա որ անկեղծօրէն իւր գոյացուցած համոզումն հրապարակած է. 2. Կը ծափահարեմ երբ կը նշանակէ «Եթէ տխուր գաղափար մ'ունենայինք թէ այն շինուածոյն՝ յոր կը հոյնք» որդնահար են բոլոր հիմունքը, եւ թէ ո՛ր և է ցունց ըստպաշտօնէ կործանման. այլ ընդհակառակն մեր խորին համոզումն այն է թէ Հայաստանեայց եկեղեցւոյ շինուածն կառուցեալ է այնպէս՝ զի հնար է փոխել յաջորդաբար բոլոր օտար բարերն ու հին վիմաշարերն (assise)՝ առանց անոր ամբողջութեան մասին իւր օրինակելի՝ աշխատասիրութիւնը: Սակայն իւր ըննադատութեան մէջ կը սըխալի երբ յերկրման գաղափարը կ'ընծայէ Խորենացւոյ, փոխափառ ձերուհին որ, ըստ իս, չէ հեռացած երբեք յօգուցն ճմարտութեան: Զեմ ձեռնհաս թէեւ խնդրոյն պաշտպանութեանը՝ բայց դիտել կը տամ թէ 1. զԽորենացին պիտի համարէինք նաեւ

ստեղծիչ՝ Արուսեան անուն եւ Արուսեան է ըրած կոչումներուն , 55 տարիներ առաջ՝ երբ տոգորուէինք այն նորաւոր վարդապետութեամբն . Բէ խորհրդին հայրենասիրական նպատակաց համար չէ խղճեր խորհրդիւն . բայց բարեբաղդաբար Արուսեանի կամ Արուսեանի գիւտն զխորհրդան ծերունին պաշտպանեց այդ անպատճառ ըսուելիք զրպարտութեանէ . 2. երբ Եւսեփիոս կը պատմէ զԱրգարէ եւ կ'ակնարկէ Հայոց վրայ եւս թագաւորելն մինչդեռ չ'ունի կամ չ'է նշանակած աղբիւր մը ո՞չ ապաքէն այդու խնդիրն Դ. զարի մէջ հասարակաց յայտնի մի իրողութիւն լինիլն կ'ապացուցանէ լուսնայն . 3. Ինչ պէտք ունէր խորհրդացին Է. դեռնալ ինքեան խառնել եւ գտնել Արուսեանն մինչդեռ աչքի առաջ ունէր Եւսեփիոսն , ո՞չ ապաքէն այս խառնարկութիւնը՝ Հայ Մովսէսին քննաւորութիւնը ցոյց կը տան նախ եւ ապա շատ բաներու հմուտ լինիլն զորս եւ Տէր Եղիշէ զլանայ ճանաչել զէթ ի մասինս . 4. Միթէ այնչափ տղէտ էր խորհրդացին որ չէր կշռեր թէ Արուսեանի անունն յիշատակութիւնն որ մը կրնար խայտառակել իւր ստութիւնն . ուստի եւ հեղինակն ընդ լուսնութեամբ թողուելու էր : Ո՞չ ապաքէն եւ յիշատակութիւնը ինքնին բաւական հաստատութիւն մ'է խորհրդան անաչառութեան :

Զայսոսով նշանակելով հանդերձ չեմ ուզեր յայտարարել թէ՛ բազմակողմանի , եւ մանաւանդ առանց կանխակալ մտածմանց լինելիք քննութեանց արդիւնքն այժմէն մերժելի է . խորհրդան անխաղախութեան կռուանին վերայ յեցեալ ամեն կերպ ընդունութեանց պատրաստ եմք լսել . նոյնպէս , մեզ համար , ստուգապատում են եւ Փարպեցին եւ Յովհաննէս 2. Դրասխանակերտցի — թէ եւ ո՞չ անխալ :

Ուստի կ'ընդունիմք թէ Արգար թագաւորած չ'ըլլայ Հայոց Էթէ Էթէ՛ « քթքթ » եւ « քթքթ » . բայց խորհրդացին սխալած պիտի համարիմք եւեթ եւ ոչ յերկրի յընտրութեան աղբերաց կամ ի քննադատութեան :

Ա՛րքունիմք թէ հայ արքայք թագաւորած լինին ի Հայս Արշամ , Արգար , Անանուս եւ արքայից ժամանակ բայց խորհրդացին ծանօթ չէր զայնս յիշող Հռովմայեցի պատմագրաց , իմ համոզմամբ :

Ա՛րքունիմք նոյնպէս Զամեանի ժամանակագրութիւնը՝ ակառելով որ Մովսէս երբեմն անուշադիր է . եւ նոյն իսկ ըստ Գաթրիկեանի շեմք մերժելն ընդունել եւ Մեծին Ներսիսի մահը նշանակել 575 թըռիւն՝ քանի որ Կ. Պոլսոյ Ս. Ժողովոյն մէջ նորա չը գտնուին երբէք չ'ըստաններ Հայ եկեղեցւոյ անկախութեան խնդրոյն , քանի որ ի Պապայ թունաւորման պարագայն չ'անկանիր ընդ երկրայութեամբ . քանի որ նա միշտ հիմնադիր կը մնայ մարգարական գեղեցիկ հաստատութեանց եւ հետեւապէս արժանաւոր Միջ ախտորսին : Բայց զայդ ամենայն եւ դեռ ուրիշ փոփոխումներ ընդունելու համար կը պահանջեմք լուրջ քաջութիւն :

Ա՛րքունիմք մեր կարծիքն Արգարայ հարցի մասին կ'անցնիմք այն խնդրոց զորս մեր յօդուածոց մէջ ցանուցիր նշանակելիքն :

Հայրենագիտութիւնը դարձեալ ուսմանց առաջին եւ մեծագոյն տեղին կը գըրաւ Գերմանական դրութեան մէջ , որպէս կը հաւաստեն : Եւ ամեն ազգեր կը ցանկան ընդ օրինակել Գերմանական դրութեան :

Թիւնն : Արգ. հայրենագիտութեան ուսման մէջ կարեւոր տեղին ունի ազգին քաղաքական անցելոյն նկարագիրն որ զներկային սերմունն յինքն բովանդակէ . ուստի եւ Ազգային Պատմութիւնն է հրահանգ ներկային՝ յեցեալ անցելոյն փորձառութեան :

Կը դիտեմք սակայն որ մեր դպրոցաց մէջ ընդհանրապէս հայրենագիտութեան ուսումն եւ մասնաւորապէս Ազգ. Պատմութիւնը շատ ստորին դիրքի վերածեալ է : (Ազգ. Կրօնի ուսուցումն եւս չ'է փայլուն վիճակի մէջ թէ եւ ոմանք շատ խիկ կը տեսնան արդի դասաւանդութիւնն : Եթէ կայ մի ինչ որ լաւ դիրք գրաւել է եւ այն մայրենի հին լեզուի ուսուցումն է թէ եւ ոչ ամենուրեք : Մեր դպրոցաց մէջ Ազգային Պատմութեան մասին նշանակեալ է Զօլաքեան պատմութեան դասագիրքն բայց մեր կարծեօք նա բնաւ չը համապատասխանէր պիտոյից : 1. հարցական ձեւն , 2. ընդարձակ պատասխաններն , 3. տաղտկացուցիչ տեղեկութիւններն , 4. կարեւոր տեղեկութեանց բացակայութիւնը գլխովին կը հակառակին նպատակին այսինքն է « գրօսեցուցիչ ձեւով մանկան մտաց մէջ տպաւորել ազգի անցեալ կեանքը » : Թէ եւ քանի որ հարցական ձեւը չը պիտի փտարուի պատմական ուսմանց մասին՝ կրնան դործածուիլ Զօլաքեանն ալ եւ դեռ անկից ստորագոյններն ալ :

Նախնական վարժարանաց համար ըստ իս գերազանցապէս օգտակար կրնայ լինիլ Մայրենի Լեզուի Դ. տարին քանի որ մօտիկ է մանկան մտաց՝ իւր լեզուովն եւ ձեւովն եւ պարունակութեամբն թէ եւ համարում — :

Երկրորդակարգ վարժարանաց համար Զաքեան եւ Մամուրեան կրնան օգտակար լինիլ բայց բարեփոխուելով : Առաջնոյն համար խնդրելի էր ոճոյ եւ ձեւի փոփոխութիւն եւ ընդարձակ ծանօթութեանց օրինաւոր ձեւով մի միացումն ընդ ամբողջին . իսկ երկրորդէն պահանջելի է յաւելումն այն ծանօթութեանց որք կան ի Զաքեանն եւ խնամեալ քննութիւն մը իւր յայտնած դատողութեանցն : Երկուքն ալ հաւասարապէս պէտք է յաւելուն ժամանակագրութեան եւ հեղինակաց մասին տեղեկութիւններ , որք զարգացելոց համար անհրաժեշտ են : Իսկ բարձրագոյն վարժարանաց եւ մանաւանդ ուսուցչաց համար պէտք է մեզ մի նոր Զամեան որ չ'ունենայ Հ. Միքայէլի կաթիլն եւ իսկականաց քաջաբան օգին , որ քննէ ազգային եւ օտար պատմիչներն , որ համաձայնեցնէ մեր ժամանակագրութիւնն՝ արտաքին ժամանակագրութեան , որ արժանացնէ եւ մեր պատմութիւնը արեւելեական պատմութեան (մէջ*) իւր տեղին գրաւելու — Բոլոր պատմագիտաց բաղձանքն , բաղձանք որոյ ենթակայն մեծագործութիւն է — : Ահաւասիկ զայս կը պահանջեմք մեր ազգային իշխանութեանն :

Այո՛ , պէտք է եկեղեցական իշխանութիւնը հսկէ՝ որպէս զի ի դպրոցս աւելի ժամեր յատկացուին պատմական ուսման , որպէս զի լուսագոյն դասգրքեր չ'ընեն առնուն , դասախօսք քաջալերուին եւ եւ :

Հայրենագիտութեան ուսումն պիտ' արգիլէ

*) Ազգային շնորհակալեաց արժանի են Օսմանեան պատուական պատմագիրք , որք իրենց ընդհ. պատմութեան մէջ արձանագրել են եւ զմեր անցեալն :

Հայն՝ յարեալ օտար դաւանութեանց , սիրելու օտար հայրենիք , օտար լեզու եւ բարձր եւ վարք :

Վ.ԱՐԴԱՆ Կ. ԱՐՄԱՆԵԱՆ

Երեք յօդուածոցս մէջ սարդած զրիպակներէն Գ. ին մէջ պէտք է Արդ տողի սկիզբը դնել քայքայ բառ մը . Տրդ տողի սկիզբը յաւելուլ է մը . 52րդ տողի մէջ երբեմն բառը կարդալ երբ երբեմն . երկրորդ սխալակի 58րդ տողի մէջ՝ կը պարտաւորէ բառին ըով դնել նաեւ :

ՀՐԱԽԵՐ ՄԵ ՅԵՐԿՆԻՑ

(ԵՂՅՈՐ ՆԱՄԱԿԸ)

Թէպէտ նորօրինակ , սակայն մի զարմանալ , այս ալ հրաչք մըն է :

Մեր Գրիգոր աղայի հայրը , վաթսուս տարու կայտառ երիտաւորք մի էր , երիտաւորք կ'ըսեմ , վասն զի հեշտիւ կը կրէր այդ կըր տարիներու կըր բեռն իւր ուսոցը վրայ : Երեսի կարմիրը գետին կը կաթէր ինչպէս կ'ըսեն Պանտոսի մայրաքաղաքի կանայք :

Անան մէկ զուարթ որ մը մեր ծերունին իւր մօտ կը գումարէ զորդիւս ե զթոռունս , եւ այն գումարտակի զլուխն անցնելով՝ քաղաքէն հեռու կէս ժամու շափ վանք մը կայ , անդ կ'երթան : Նպատակը տակաւին ծածուկ է : Մոմ կը վառեն , աղօթք կ'ընեն , արջոր մ'ալ մատաղ : Ծերունին դիմաց ժըպիտն մերթ այլայլութեան կը փոխուէ , կը տխրէր : Կարծես զուարթութեան հետ տըխրութիւն կը կուռէր նորա դէմքի վրայ : Այլ վերջապէս ժմիտն ու ժպիտն իսկոյն զետեղուեցան նորա դիմաց վրայ :

Ամեն օր կը զարմանայր Գրիգոր աղայի հօր այս նոր ընթացքի վրայ :

Երեկոյ մօտ էր երբ տուն վերադարձան այս խրախճանէն :

Ծերունին զամենն իւր քով պահեց , այս երեկոյ հանդէս մը եւս ունինք , սակայն ի վերջոյ շատ չը պիտի բերկրիք , զի անշատում մը տեղի պիտի ունենայ , ըսաւ , բայց ի ներկայից ո՞չ օր կրցաւ իմաստին վերահասու լինիլ : Այդ վայրկեանին դուռը զարնուեցաւ , ահա մի ծանօթ մարդ , եւ թեւին տակ տուփով արձանէ մը ներս մտաւ : Գրիգոր աղայի հայրը ժպտեցաւ , միւսներն եւս բարձրաձայն սկսան խնդալ , նուագածուն ձերուներոյն հրամանաւ եկեղեցական տխուր երգով բացաւ արմոնիկին եւ իւր բերանն : Երկու ժամու ուրախութիւն ընդ միջեցաւ՝ երկայն հասակ տխրազգեաց դիմք սկիզի ձեռին , ուրախ ի վզին քահանայի մը գալտեամբ : Քահանան շփոթած էր տունն ուրախութեան մէջ գտնելուն : Տնեցիք ապշած իրար երես կը նայէին , յեղակարծ տէրտէրին ներս մտնելուն :

Յայնժամ ծերունին , չուրջը դարձնելով աչերն , ցարդ փոսոր պատող երեսի քողն վար առաւ , ահա տոգոյն դէմք մըն էր մէջտեղ ելաւ : Հայեացքն այլ եւս ախարհի չէին , ձայնն եւ խօսուածքն այլ եւս առաջինը չէին , մարմինը քառամասաբառ : Վայրիկ մի շունչ առնելէ եւ ինքզինք գտնելէ վերջ , ձեռքը գրտաւը խոթեց ու թաշկինակն առաւ , աչերը սրբելով հանգարտ բայց զգայուն ձայնիւ մը սկսաւ .

« Արեւի զաւակունքս եւ թոռնեակ-

ներս, դուք հետաքրքրեցաք այլ ես լեցի։
Ուղեցի վերջին անգամ մի եւս զձեզ բոլոր-
տիքս համախմբած ձեզ հետ հրճուիմ այս
աշխարհէս մեկնելէս յառաջ»։ Զարմացման
ակնարկներ կը շրջանակէին անդ զըտ-
նուողք։ — «Մի՛ տխրիք, այս է բարձրե-
լոյն հրամանն։ Առաջի օր, վախճանեալ
եղբայրս ինձ ներկայացաւ քնոյս մէջ,
դէմքը տխուր, աչերը գլխու էին։ Բոլորո-
վին ի սեւ համակեալ եւ երկայն վերարկու
վրան առած որոյ բոլորովին ինձ անծանօթ
տառերով գրութիւն մի կար եւ փոխանակ
խօսելու, բառ մը արտասանելու, միշտ մա-
տին ծայրովն երկինք կը ցուցնէր ինձ եւ
միւս ձեռամբ նամակ տալէ վերջ անխոյտ
եղաւ մէկ ակնթարթի մէջ։ Բացի նամակն,
հեկեկանօք կ'ըսէր կայտառ ալեւորն, եւ
հետեւեալն ընթերցայ»։

«Սիրուն ծերունկ»։

«Դու այլ եւս չը պիտի ապրիս այդ մե-
« ղօք լի վարի աշխարհի մէջ»։ քեզ համար
« աթու մը կայ պարտաւոր զոր պիտի վա-
« յեկես յաւերժ յարքայութիւնն անձառելի։
« Եղբորդ մօտ պիտի լինիս, զի նա եւս
« արժանացաւ ինչպէս դու այդ անմահ
« փառաց։ Պատրաստուէ, երեք օր վերջ,
« կիրակի գիշեր, յերկրորդ պահուն առ
« մեզ պիտի թռչիս»։

«Պաշտօնեայն Աստուծոյ

«Գ. Հրեշտակապետ»

Ծերունին աւարտեց բոլորովին անայլայլ
եւ մեկուսի խոստովանելէ վերջ հաղորդե-
ուեցաւ։ Զաւակներն եւ թոռներն, որոնք
տրտում տրտում զիրար կը դիտէին առանց
բան մը հասկնալ կարենալու, մի առ մի ող-
ջագուրեց եւ համբուրեց։

«Շարունակեցէք, ըսաւ անխոռով ձայ-
նիւ մը, երգել եւ հրճուիլ, ես եւս ձեզ
միշտ մասնակից պիտի լինիմ, եթէ ոչ հոս-
կէ, գէթ երկնային կաճառէն»։ — Այն
ինչ քառորդ մըն էր անցած, հէգ ծերունի
գլուխը որմին դարձուց. այլ մեռած է։

Ա. ՀԱՄԱՐԳԱՅԹԱՆ

ԱՆՆԱԿԱՆ

ԳԵՂՈՆ

Ա.

Աւա՛ղ, ո՞ւր կ'երթայ ծիւնը զոր հովն
իւր սրաթեւ թռիչներուն վրայ առած կը
տանի։ Ո՞ւր պիտի իյնայ մահաշունչ հիւ-
սիւնակէն արտալածիկ դարկահար տերեւն։
Ո՞ւր պիտի կանգ առնու այն ծառատունկը
զոր կը վարեն հեղեղին տղմուտ ջրերն մը-
ռնչմամբ...

Փոքրիկն Անժէլ վեց տարեկան էր։ Խա-
ժուկ աչեր ունէր, եւ երկար դեղձանիկ
մազեր, որ գանգուր գանգուր իւր թարմ
դիմաց վրայ կը ծածանէին։

Մայրն, Ուիլհելմին կոմսուհին, կ'ըսէ օր
մը. «Աղջիկս, այդ ծաղկաւէտ կանաչ դա-
րաստանէն անդին չ'ըլլայ որ երթաս»։ Բայց
Անժէլ անդունեց մօրը խրատն, եւ ահա
օր մը լայնածաւալ դարաստանին ծառու-
ղեաց մէջէն ոսկեայ եւ կապտագեղ թեւօք
թիթեռանց ետեւէն կը վազէր։ Երբէք չը
խորհեցաւ թէ կրնար յոգնիլ։ Կը վազէ, կը
թռչի, կը խայտայ, վարսագեղ թիւոց ե-

զերքս վայրենի թուի կը ծոզէ, եւ ապա
վերջապէս ողբապառ դալարեաց վրայ կը
նստի զանոնք ճաշակելու։

Այլ ապա իմանալով որ իւր մօրն-հրա-
մանին անաստ գտնուած է եւ անցած
յանդէտս դարաստանին վերջին սահման-
ներն, ուղեց յետս դառնալ. տարաբաղդ
աղջիկը զգեկին աշտարակները չէր նշա-
րեր։

Խորին լռութիւն կը տիրէր շուրջանակի.
իւր գլխուն վերեւ ահագին թխաթոյր ամ-
պեր կը կազմուէին. մրկայոյզ հովը ծառոց
մէջէն կ'անցնէր ահեղ մռնչմամբ։ Կը վախ-
նար, բաւական ժամանակ անցած էր ար-
դէն յորմէհեաէ կոնանչագեղ դարաստան ան-
ցած ու մտած էր այն անտառն՝ որ էր որջ
դալերու եւ կայան դէժնեաց (bohémien)։
Սարսափած սկսաւ աղաղակել իւր բոլոր ու-
ժով. մայրի՛կ, մայրի՛կ։

Պէտք է ըսել թէ այդ դարաստանի կից կը
գտնուէր անտառ մը՝ հազիւ թափանցելի
արեգական ճառագայթներէ, ուր կը յա-
ճախէին եւեթ չրջակայ գիւղականներու բնա-
կիչք եւ այլ սակաւամեղ այցելուք զորս պի-
տի ճանչանք այս պատմութեան ընթացքին
մէջ։ Եւ ահա այս տեղ կը գտնուէր Անժէլ
երբ արձակեց տխրութեան այն աղաղակը.
մայրի՛կ, մայրի՛կ։

Յայնժամ չիկագոյն ու գանգրագեղ մա-
զերով ծածկուած թուխ գլուխ մը մօտա-
կայ թաւուտէն դուրս ելաւ, եւ ածխոյ պէս
սեւ խոշոր աչեր Անժէլի վրայ սեւեռեցան,
մինչդեռ ձեռք մը նորա ուսին վրայ ինկաւ
եւ միւս մ'ալ զայն գետնէն վերուց։ Կըզ-
գար թէ զինքն հեղեղատներու ու թաւուտ-
ներու մէջէն կը տանէին, եւ ամեն ան-
գամ որ բերանը բանալու կ'ըլլար խօսելու
կամ պօռալու, երկու խոշոր սեւ աչերը լը-
ռութիւն կ'ազդէին. դժոխաբար ձայն մ'ալ
կ'ըսէր. լռէ՛։

Այս միջոցին Ուիլհելմին կոմսուհին մոլ-
եալ, առ անձկութեան սրտին, մարգետի-
նը, դարաստան եւ անտառին չրջակայները
կը վազվզէր։ Ամեն մէկ թիւին, ամեն մէկ
ծառին առջեւ կանգ առնելով, պաղատա-
կան ձայնով մը կը գոչէր. Անժէ՛լ, Անժէ՛լ,
ո՞ւր ես աղջիկս։

Երեկոյն հասաւ լճակի մը եզրն՝ յորում
գորտերը կը կռկային եւ ուր կը ցոլար
աղօտասահ լուսինը։ Թեթեւ կապտագոյն
բոց մը եղեգանց վերեւ կը սողոսկէր։ Կոմ-
սուհին իւր զառանցանոց մէջ ճանաչել կար-
ծեց իւր դուստրը, դուստրն՝ որ կը փախ-
չէր եւ որուն կաղէ երկնագոյն քօղն հող-
մածփիկ կը ծածանէր օդին մէջ։

Նորէն զոչեց, Անժէ՛լ, Անժէ՛լ, Գոր-
տերը լռեցին ջուրց մէջ, լուսինը ծածկը-
ուեցաւ լերանց ետեւն եւ կապտագոյն բո-
ցը, կամ լաւ է ըսել չրջակայ հոգն սկսաւ
ճախել հիասքանչ արագութեամբ. ապա
յանկարծ աներեւոյթ եղաւ։

Կոմսուհին կարծես խելայեղ կ'ըլլար։
Անժէ՛լ, Անժէ՛լ, աղաղակեց յուսահատ, եւ
լալահառաջ ձայն մը՝ որ գոգցես ջուրց խո-
րերէն կ'ելնէր, պատասխանեց։

Աւա՛ղ, ո՞ւր կ'երթայ ծիւնը զոր հովն
իւր սրաթեւ թռիչներուն վրայ առած կը
տանի։ Ո՞ւր պիտի իյնայ մահաշունչ հիւսի-
սակէն արտալածիկ թալկահար տերեւն։
Ո՞ւր պիտի կանգ առնու այն ծառատուն-
կը՝ զոր կը վարեն հեղեղին տղմուտ ջրերը
մռնչմամբ...

Բ.

Ո՞վ էր ուրեմն այս թխաթոյն գլուխն,

այս տարօրինակ կիւնն, այս մանկագոյն
Անշուշտ գուռակեցիք թէ գնչու մ'էր դա։

Ի՞նչ է ուրեմն այս ժողովուրդն, այս
դաղթականներն, այս թափառական խում-
բըն, որք իրենց անցած երկիրներուն լեզ-
ուաւ, Զէնկարիք, Ժիպսիք, Ժիթանօք, եւ
գիւտացիք կամ Պոհեմացիք կը կոչուին։

Ուրիշց կուգան կորագիթ եւ գանգրա-
գեղ մազերով այս վաշկատուն ամբօրն.
մարդ կեղէն այս հրոսակներն, այս չիկակն
կանայք եւ պատառատուն ու ծամածուռ
զիմօք այս տղայք։ Ո՞ւր կ'երթան։ Ի՞նչ ու-
ճիր կը քաւեն։ Ի՞նչ նպատակ ունին։ Եր-
բէք մէկու մը յայտնած չեն։ Եւ թերեւս
իրենք ալ չը գիտեն։

Այս դարմանալի ու խորհրդաւոր ժողո-
վուրդն, որ ո՛չ պաշտամունք ունի եւ ոչ
օրինագիրք, ո՛չ ծխան եւ ոչ տեղ, ո՛չ հա-
ւատք եւ ոչ օրէնք եւ ո՛չ իսկ ընտանեկան
բնագոյ. զոր թռչնելին իսկ պարզեաւ
է Աստուած, կ'երթայ, միշտ կ'երթայ հը-
պարտութեամբ ծածկուած իւր ցնցոտեաց
ներքեւ, միշտ կը քալէ եւ ո՛չ ուրեք կանգ
կ'առնու՝ քաղաքալրութիւնը միշտ արհա-
մարհելով։

«Ճակատագրի այս դաւաններն» որք
« դատարկանձն արքայներ» կոչուած են՝
միշտ կ'երազեն. ծոյլ են, անկախ եւ միան-
գամայն ճարտարագէտ. իրենց նիւթական
ախորժակներէն կը մղուին. ապէս են բար-
ւոյն ու չարին. կը գողնան իրենց ախոր-
ժակին յազեցներու համար, կը նետեն ի-
րենց ճանկերը ճամբուն վրայ պատահած
որսին, ամեն ինչ լաւ կ'եփուի իրենց աղ-
տեղի կաթնային մէջ, թող ըլլայ հաւ մը
կամ խուրդ մը, մուկ մը կամ կատու մը եւ
կամ գառնուկի կամ գայլի չորիւր մաս մը։

Այս այլանդակ եւ ընտ ժողովրդեան՝
որ ԺԳ. դարուն իւր ապագատկութեամբ
քրիստոնեայ Եւրոպան ահաբեկեց՝ տղաք-
ներէն կան որ մասնաւոր արհեստներ ու-
նին. ոմանք արջ կը խաղցնեն, ոմանք աճ-
պարար են, այլք բախտ նայող, ոմանք լա-
րախաղ, բայց մանաւանդ մանկագող, եւ
իրենց գողութիւն տղաքներն ընդ հանրապէս
կապոյտ աչերով, խարտեալ մազերով, վար-
դագոյն այտերով փոքրիկ սերովքէներ են,
զորս էջմէռալտաներ, Ֆընէլլաներ, լարա-
խաղ, բախտ նայող եւ Կնչու կը շինեն։

Եւ այս ամենը գիտնալով, մարք ի տես
այս այլանդակ հագուստներ հագած զըն-
չուաց, իրենց փոքրիկ հրեշտակները կուրծ-
քերնուն վրայ կը սեղմեն, եւ երբ այս ան-
համբեր ու զրօտաւոր հրեշտակները թի-
թեռանց ետեւէն վազելու երթան՝ մայ-
րերին կը պատուիրեն որ շատ հեռուն չեր-
թան եւ Ուիլհելմին կոմսուհույն պէս իրենց
Անժէլներուն կ'ըսեն. Այդ ծաղկազարդ
կանանչ մարգագետնէն անդին չ'ըլլայ որ
երթաս։

Աւա՛ղ, մեր Անժէլը մոռցաւ իւր մօրը
խրատն եւ բռնուեցաւ գնչուներէն, որք
հակառակ իւր աղաղակներուն ու արտասո-
ւազ՝ տարին զինքը շատ ու շատ հեռու ի-
րենց սայլակին վրայ որ այլ եւս աշտարա-
կաւոր դղեկին ու ծաղկազարդ դարաստին
տեղ պիտի բռնէր։

Գնչուներն ի սկզբան ուղեցին որ իրենց
այլանդակ երգերն երգէ հասարակաց հրա-
պարակներուն վրայ ու փողոցաց մէջ, բայց
իրենց զշխոյն, Տարկո թագուհին, որ փայ-
լուն մազ ունեցող կը նշանակէ, եւ որում
ամենքը կուրօրէն կը հնազանդին, բացար-
ձակապէս հակառակեցաւ։

Հոս կայ բարոյական առեղծուած մը՝

զոր խմածութեամբ լինեն ընդ վայր վը ջանայ լուծելու Այո, այս արեւակէզ, անձրեւէն ժանգոտած, հովէն ծեծուած դէմքով Տարկոն, այս գնչուն որ գուրկ է բարոյական զգացումներէ, այս ստախոս կախարչն, այս մանկագողն՝ սկսաւ սիրել զԱնժէլ իւր հարազատ որդւոյն պէս:

Արեմն Անժէլ չ'երգեր, չը պարեր, թափառական խմբին շփացած տղան է. պառաւ Տարկոն զնա կորորէ, գնա կը գգուէ ու անոր ամեն բնականօրէն կը գոհացնէ. գնչուաց այնքան շատ սիրած պայծառ կերպաներով կը հագուեցնէր, հմայական պահպանակներ եւ բիւրեղեայ մանր մուկնր բժժանքներ կը կախէր նորա վզէն. կը հըպարտանար, կը կոչէր զնա Բրէշիօզա, Օռլանտա, Ակուէֆֆինա, Քլարիպէլ, Մէրիտիանա, աստղերու ու ծաղիկներու անուններ՝ որք այնքան սիրելի են իւր անարգութեան մէջ իսկ բանաստեղծ ու ճարտարագէտ այս ժողովրդեան:

Անխնային կոմսուհւոյն գանք: Խռովեալ ու անհամբեր էր քանի որ արեգակն հորիզոնն ի վայր կ'իջնէր ու ըստուերները կը թանձրանային դաշտերուն մէջ. երբ գիշեր եղաւ, առ վշտին յսմարացած, գաւթին ու անտառը կը վազվզէր. ծառոց մէջ մռնչող հովն, եղեգանց վերեւ սողոսկող շրմուկի հուրն եւ կարկաչատահ գետակը կը հարցափորձէր. ճանապարհին ամեն թփերէն, երկնքի ամեն աստղերէն իւր աղօթին, իւր Անժէլն, իւր գանձը կը խնդրէր:

Առաւօտուն դղելին սպասաւորներն անձկութեամբ ու որդւոյն բացակայութեան վրայ ի խոյզ ելան. բայց միայն մայրը ծառի մը ստորոտը կ'ըլլաւ, սառած ու անկենդան դանելով առնէ բերին:

Աւաղ, երբեմնի ծիծաղկոտ, կենդանի եւ Անժէլի մանկական ծիծաղներով, նորա աղաղակներով, խաղերով ու ներկայութեամբ վառեալ տուն մը, ի՞նչ եղած էր այսօր: Տղան մեկնած էր եւ ընդ նմին բարեկեցականութիւնը, կեանքն ու տան հոգին:

Ամեն ինչ տխուր էր, ամեն ինչ ի սուգ: Ծառայները ցած ձայնով կը խօսակցին. հաւքակն (basse-cour), որուն հոգն Անժէլն կը վերաբերէր, ալ գոգցես արշալոյսին ծագումն աւետելու պաշտօնը մոռցած էր. շունները տխրագին կը հաչէին, եղները տրամագին կը բառաչէին. բակին մէջ խոտ կը բուսնէր, մորենիք ծառ ուղեաց եղբրքի վարդաթփոց կը խառնուէին, վերջապէս ամեն ինչ տխուր էր, ամեն ինչ ի սուգ:

Գիշերը, մինչ աղօտասահ լուսինը բարձրաբերձ մայրից մէջէն կը ձգէր իւր աղաւնող շողերն, երբ ալ ի հեռուստ կը լուին աշխատասէր ծառկոտիկին (pic) կային հարուածներն որ դառաւ ծառոց կեղեւները կը ծակծկէ, կին մը կը տեսնուի որ դղեակէն դուրս կը սպրդի, այս կինը միշտ յառաջ կ'երթայ առանց հոգ ընելու ո՛չ բարերն ու մացառներն, ո՛չ գետակներն եւ ո՛չ այն բիւրաւոր խոշորոտներն, որք կը պարզին իւր քայլերուն առջեւ, կը վազէ միշտ: Ասկայն երբեմն կանգ կ'առնու, ձեռքը ճակտին կը դնէ գոգցես իւր ցնորեալ միտքն ամփոփելու. ապա սրտառուէ ու աղիւղորով ձայն մը կը լսուի. Անժէլ, Անժէլ, ո՛ր ես:

Այս կինը գողցուած տղուն մայրն է, Անխնային կոմսուհին:

Ամբողջ օր իւր սենեկին մէջ կ'անցնէ, մերթ աղօթարանը (prie-Dieu) կ'երթայ ու

աղօթից մէջ կը խորասուզի, եւ մերթ իւր աղջկան ձիւնաթոյր ու վարդապոյն փոքրիկ անկողնոյն քով ուր կ'արտասուէ լալահառաչ, եւ երեկոյին գրգռեալ ու յիմարացեալ, վշտահար ու արտասուածքով աչօք դուրս կ'ելնէ, կը փախչի, կ'երթայ, կը խնդրէ գիշերէն որ իրեն տայ իւր կեանքն, իւր լոյսն, չէք մայր:

Եւ գիշերուան խորհրդաւոր մրմունջները գոգցես կը պատասխանեն:

Աւաղ, ո՛ր կ'երթայ ձիւնը զոր հովն իւր սրաթեւ թռչներուն վրայ առած կը տանի: Ո՛ր պիտի խնայ մահաշունչ հիւսիսակէն արտաշնչիկ դալկահար տերեւը: Ո՛ր պիտի կանգ առնու այն ծառատունկը զոր կը վարեն հեղեղին տղմուտ ջրերը մըռնչմամբ...

Թարգմ. Պ. ԹԵԼԼԱՆ

(Մնացեալ յաջորդ խոսքով)

ՍԻՍԱԿ ԵՒ ՍՈՍՈՒՆ (14)

ԲՆՈՒԹԵԱՆ ՍՈՒԱԿՆԵՐ

(ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՔԵՐ)

ԼԵ.

Արեգական վերջին ճառագայթներն ոսկեգոյն շողերն՝ Ուշտունեաց գեղեցիկ դաշտի եւ Աղթամարայ սրտակոտոր չընաղ ծովի մակարդակն անդամ մ'եւս փայլալեզու վերջին հրաժեշտը կուտային եւ նորա յետին շողերն Աղթամարայ Ս. Խաչի բարձրագոյն գմբէթի խաչին փայլը կ'զգլխէին. անգին «Լուս տէրն» եւ «Մանածիբ» «Ս. Վարդան եւ Ոստան» կարծես յուսաբեկ այրւոյ մը գոյն գգեցած տարբեր երեւոյթ մը ներկայէին տեսողներին աչաց, ու Նարեկ գիւղի կեղրոնը վեհափառ տեսարանով մը բարձրացած համանուն համբաւաւոր վանուց բառափայլ գմբէթներն՝ ինչպէս չորրորդութիւն մը կազմող անքան պահապանները՝ չընդ եւ վեհապանք կը հսկէին ողջոյն Ուշտունեաց եւ նոցա հովանիին ներքեւ հաւաքուած հազարաւոր բարեպաշտ ուխտաւորաց. մեր գեղընկերի խումբ կ'ողջունէ այդ վանուց արեւմտեան կողմի մեծ դուռն, ու կը խառնուի ուխտաւորաց այն ահագին բազմութեան՝ որոնք արդէն կազմած էին մոզական հանդէս մը աննման ուրախութեան:

Նարեկայ վանքն իր պատմական կարեւորութեամբ եւ նորա անունը նուիրագործող Ս. Հօր յիշատակաւ այնքան մեծ տեղ բռնած է Հայաստանի մանաւանդ Վասպուրականի եւ Տուրքիստանի հայի սըրտին եւ մտքին մէջ որչափ մեծ եւ ջերմ այն կրօնական երկիւղածութիւնն որով կը վերաբերին առ այդ սուրբ անուն: Այն կրօնական սուրբ կապն որ կը զօդէ մեր ազգութիւնն եւ եկեղեցին ինչպէս մի մարմին, եւ առթիւ տուած է ցարդ եւս հայի գոյութեան, կենդանի օրինակներով կը փայլի հոս:

Ամեն տարի մէկ քանի տօնական օրերի մէջ՝ բարեպաշտ ուխտաւորաց կողմէն հոս կը կատարուի կրօնական մեծ հանդէս՝ զոր Մովսեցիներ, Խիզանցիներ, Կարճկանցիներ եւ դեռ ուրիշ գաւառացիներ իրենց տե-

ղական բարբառով կը կոչեն շաբաթէ*) : Նարեկայ շաբաթներն գլխաւորն է ամեն տարի Վարդապետի տօնին հոն կատարուելիք հանդէսը:

Քանի՜ քաղցր է դիտել Ուշտունեաց դաշտի հարաւակողմէն Վանի գեղածիծաղ ծովի մակերեւոյթէն մէկ ժամ հեռու Քաւալի գողարիկ դաշտի հարաւային յուսթի եւ բարեբեր մասի վրայ՝ Նարեկ շնորհաշուք գիւղի կեղրոնը փառահեղ երեւոյթով մը բարձրացած Ս. Գրիգորի վանուց՝ երկնականար տաճարի արեւելակողմի սենեկաց տանիքէն հորիզոնի ընդարձակութիւնն եւ իր ականդիք շլացնող եւ սիրտը մագնիսող հազար ու մէկ տեսարաններն: — Առաւօտ էր՝ ամրան գեղեցիկ եւ Վարդապետի վարդաբոյր մի առաւօտ, բնութիւնն իր հըմայեղներով եղեմը կը պատկերէր մեր մօտ: Երկինքը՝ զուարթ ու պայծառ, արշալոյսի քաղցր գեփիւնը՝ չընաղափայլ փափկիկ կոյսի մը պէս՝ լողալով ու զովանալով Վանի սրտաթունք ծովէն կուգար փայփայել ամեն երես: Մեր գիմացը՝ հորիզոնի ահագին տարածութեան վերջակէտը կը կազմէր Վարդայ Ս. Սարը, Վանի գրախտագեղ երեւոյթն եւ Արտամերտի եղեմական պարտէզը. ծովն իր աղու ալիքներով՝ կը յուզէր զմեզ: Ուր որ դարձնէինք ակնարկներս, նուիրական յիշատակների ուրուականները կը խլէին մտքերնս՝ ինչպէս մի մագնիս: Մեր տեսութեան շատ հեռի չէին Աստղէն, Աղթամար, Մանածիբն եւ Ոստանն, Արտօսը եւ Ընձաքար, Սուրբ Վարդան եւ Նարեկացի Ս. Հօր Աղօթարան: Այս ամեն անուններն ու տեղերն այն ազգեցութիւն կը գործէին ի մեզ՝ ինչ որ բնական է... յամբարանուած մտքով ու վերացեալ երեւակայութեամբ ու անմուռն ու անկուշտ կը դիտէինք մեր շուրջը...

Մարդիկ՝ մերթ գիշերը չընաղաւորող տեսարանաց առջեւ շուրջելով՝ իրենց տեսութեան յագեցման շարք կը կորսնցընեն: Այս ազգեցութեան երկրակայ էինք եւ մենք, ու չը գիտէինք ո՛ր դիտենք. — Նարեկացւոյ երկնախորան տաճարի գեղեցիկակերտ գմբէթաց գեղեցիկութիւնը թէ՛ Գրիգոր Ս. Հօր սրտանեալ գերեզմանին յուսթ եւ երկրպագութեան եկող բարեպաշտ ժողովրդեան հոգեկան եւ մարմնական ուրախութիւնն:

Ամբողջ վանքի խցիկներն ու ծակեր բռնած էր ուխտաւորաց բազմութիւնն: Այս զուարթագին հանդիսականաց ժխորին, երգին ու պարին, դահուլ եւ զուրնի ձայնի հետ՝ Վանի վարդապետ երիտասարդաց եւ չընաղ կուսից կիսաերակայեան արդուգորդ, Մովսեց սիրուն եւ ժիր կանանց ու տղամարդերի նախնական կօտիկն¹⁾ ու քօղզ²⁾, Կարճկանի հոգայ կըտ-

*) Այս բառը քրդական բարդ բառի մը հնչումն է՝ այսպէս բաղադրուած. շաբաթներն կը նշանակէ ուրախութիւն. Դեբ՝ կը նշանակէ վանք կամ եկեղեցի, ուստի այդ կրկին բառից զուգորդութեան իմաստն է՝ եկեղեցւոյ կամ վանքի ուրախութիւն:

1) Կէս թիւի չափ բարձրութեամբ թիկանց կողմէ հակած ձեւով փայտէ շինուած հասարակ գլխարկի մը տրամագիծով կտուր, որոց վրայ քիչ մը աստառ եւ դուրսէն էլ ձակտի վերեւն արծաթ դրամ գեղին եւ զնձիւններ ու փայլուն բաներ կարեւոր ի գործ կ'ածեն Մովսեց, Շատախի, Խիզանի մի մասի եւ Մամրտանից կիներ:

2) Բուրդէ շինուած երկար ու ձեւակ

րիններն եւ հրեշտակազեղ հարսների սար-
գիրին¹⁾ և զուտնին²⁾ իրենց տարբեր գոյ-
ների հիանալի բազմազանութեամբ զմեզ կը
չլացնէին եւ մենք մոգուած այս տեսարանի
խառնուրդէն արբէիւ կը նայէինք ու մեր
աչքերը կը յածէին վանքէն երեք-չորս քա-
րընկէց հեռու այն գեղատեսիլ պարտէզի
շուրջն՝ որոյ քնքուշ ուռենեաց յանգուցիչ
հովանեաց ներքեւ դալարութեամբ եւ խնկա-
բոյր մարգերի վրայ՝ երիտասարդներէ ու
հարսներէ, այրերէ ու տիկիներէ խառն
մի խումբ կար բազմած : Գոքա վանի ազ-
գայնոց այն զգայուն դասին կը վերաբե-
րէին որոց նշանաբանն է ազգն ու եկեղե-
ցին : Այն, ինչ անուշ եւ ինչպէս բազմ
կը հասնէր այն խմբին նոյն սոխակային
ձայն մեր ականջին որ խիստ մեղմազնիկ
կ'երգէր «վտարանգին», եւ այդ ձայնի
համեմութեան հետ երգի իմաստ, կրկնա-
պատկերին մեր դիմելու փաստը :

Իսկ Հայաստանեայց այդ երկնակենցաղ
վարդապետի սուրբ դամբան՝ որ կը գըտ-
նուի վանոց առաջին եւ ամենահին սուրբ
Սանդիստոյ կոյսի հոյակապ տաճարի որմի
կից շինուած փոքրիկ մատրան մէջ, յինք
կ'ընդունէր ծուկեկերի վրայ լալով ու բազ-
կատարած սահող անհամար շարք մ'այր ու
կին բարեպաշտ ուխտաւորաց : Ո՛հ, քանի՜
մեծ եւ ինչքան վեհ է զգածումն որ կը
ծնի ի մարդ երբ կը տեսնէ այն անկեղծ
հաւատացեալներն՝ որոց հոգւոյ հետ կապ
ունի Նարեկացիի անունն, ոյք այն նեղ եւ
անծուկ անցքն ծուկեկերի վրայ անցնելով
կ'երթային ի համարոյր նոյն պաշտելի շիրմին,
ու բոլորանուէր սրտիւ զգաղերս հառաջա-
նաց՝ բարձրաւ կամաց առ նա առաքե-
լին :

Ո՛վ սրբութիւն ու անմեղութիւն պար-
զութեան որ տակաւին կը պահէս դու քո
հետքերը մեր բնակավայրի հայրերի ու
մայրերի սրտերի մէջն : . . . որքան երջանիկ
եւ անդորր է սիրտն, որ կը բառնայ զքեզ,
ու ինչ դարմանալի տղաւորութիւն որ կը
թողուս ի մարդս : Այո՛ երբ, մէկն որ ան-
ցեալի մասին կազմած է թեթեւ գաղափար
եւ ներկայն կը տեսնէ, ու այդ երկու
պատկերներն թափանցմամբ, այսպիսի հան-
դիսական օրերի մէջ՝ լուի եւ հեզիկ նստի
ու դիտէ այն խումբն ուրախութիւններ՝
զոր կ'ընեն մեր խառն ազգայինք, ու իր
ուշադրութեան առարկայ ընէ այն պատ-
մական տեղեր ու վայրերն՝ որոց ուրուա-
կանները կը զարթոյնան նորա երեւա-
կայութեան մէջ հսկայ յիշատակներն, ու
միւս կողմէ բնութեան աննկարագրելի գե-
ղեցկութիւնն իր մազնիտական բոլոր ու-
ժով զինք չընկալաւ, արդեօք մոռածմանց
ու վերացման ո՞ր աստիճանի մէջ պիտի
գտնէ զինք այն արարածը, տեսնողաց՝ կը
թողում չափել այս իմ ասածն ու ես հա-
մարձակիմ գրել թէ այդ ամենը մեր վը-
րոյ էր կատարուած այն հանդիսական օ-

գիւններ՝ որոց վրայ կը կապեն մէկ-երկու
տամնեակ գոյնզգոյն եռանկարներ ու Պարս-
կաստանի մետաքսեղէն փոշիներ՝ զոր էրիկ
մարդերը զխաղիկ տեղ կը գործածեն :

1) Դեղին, կարմիր, կանաչ, սեւ ու ճեր-
մակ գոյներով ներկուած թիթիկէ գոր-
ծուած շալվար, զոր կարողութեան տէր գեղ-
ջուկ երիտասարդները կը հագնին :

2) Իմաստկոսի կամ Բերիայի կարմիր մե-
տաքսեայ սլեզինաւոր էմբլէմ :

րին մէկն՝ որ փոքրիկ խմբով մ'այն տեղն
էինք պատահած :

Մեր այս տղաւորութիւնն որ անձամբ
տեսած հանդիսին եւ այցելութեանց յի-
շատակի անջինջ մտապատկերն է՝ այս իրո-
ղութեան նկարագրին փոխաբերական դը-
նելով, դառնանք մեր նիւթին :

ԼԸ.

Սիսակ՝ իւր խմբով վանոց առաջին դըռ-
նէն ներս կը մտնէ ու տեղոյն ծանօթ նը-
ռաքածուք (գնչուներ) տեղական ճաշա-
կաւ բան մը չափելով զանոնք կը դիմաւորեն
ու շատերի զարմանքն ու հետաքրքրութիւնը
կը շարժեն :

Վանահայր Սրբազանն, որ բարեսրտու-
թեամբ կը փայլէր ժողովրդական դատա-
կարգութեանց մէջ, անքուն եւ անխռով
խաղաղութեան կը հսկէ մինչ վերջ : Սիսակ
հեռուէն նշմարելով այդ ալեփայլ ծերունոյ
պատկառելի դէմքը, կը մօտենայ նմա ու
գոյնզգոյն եռանկարներով ու մետաքսեայ
փոշիներով իր կապուած ու թէքուած քո-
լով վար առնելով «Ծառայեմ, Սրբազան,
մեզի տեղիկ մը տուր գիշերուան, կ'ըսէ» :
Իսկ Սրբազանի հայրական քնքուշ սիրտ, որ
լի էր խանդակաթ համակրանք, կը յու-
զէին զինք ներքին մտածումները՝ խիստ մը-
տահոգ, այդ պարագային երբ կը դիտէ
Սիսակն ու իր խմբակը, հիացումը կը պա-
տէ զինք համակ, ու կ'սկսի խօսիլ փա-
փազներով խիտ անյաղ. «Սիրելի զաւա-
կըս, բաւական ուշ էք մնացած, կը տես-
նէք որ, ուխտաւորներն ամեն տեղերն են
բռնած» :

«Հոգ չէ, կ'ըսէ Սիսակ, մենք գիշերե-
լու մը տեղ կ'ուզենք, ինչ որ ալ լինի կ'ըն-
դունինք» :

«Անանկ է նէ գիւղէ մէջ կիրակոսի
օրն պարագայ է, Տիրացու Պետրոս, հոն
տար այս կտրիճները» :

Սիսակ Սրբազանի աջն համբուրելով,
«Շատ շնորհակալ եմք» կ'ըսէ, ու իրեն-
ներով տիրացու Պետրոսին կը հետեւին :

Վանոց չըջալատէն շատ հեռու չէր
կիրակոսի տունն, վայրկեան մը չ'անցած
Պետրոսի հետ կը բաղխեն նորա դուռը :
Կիրակոս Սրբազանի հրամանը լսելով, հա-
ճութեամբ կը բանայ իր դուռն, ու ամեն-
քը միասին ներս կը լցուն խառն ի խումբն :

Սիսակն որ իր գործը գիտցող զեկալա-
րի մը պէս՝ կառավարելու մէջ շատ ճար-
պիկ էր ու հեզ, «Տղերք, կ'ըսէ, սպասե-
լու ժամանակ չը կայ, ելնենք խմբովին ե-
կեղեցին երթանք մեր ուխտ կատարենք ու
յետոյ մեր գէթին նայինք» :

Ամենքը մէկէն ոտք կ'ելնեն ու սրտա-
բուխ միմեկնորով տաճարը կը մտնեն :
Հաւատով ու քերթուանդութեամբ կը դի-
մեն այն խորանն ուր ամփոփուած է գեղ-
ջուկների պաշտպան Նարեկացի Ս. Հօր
նշխարն : Սիսակն ու Սոսուն նման աղաւ-
նեաց զոյգ մ'անմեղ ձագուկներուն, ծուկ-
կերնին գետնամած ու ձեռքերնին տարա-
ծած, աչքերնին լծացած ու սրտերնին բա-
ցած կը մօտենան այն նուիրական գերեզ-
մանին, կը խոնարհին կը հախորեն ու
իրենց սրտի խորերէն մի աղերս յերկինս
կ'ուղղեն— շուտով իրենց մուրափին հաս-
նիլ կը խնդրեն :

(Շարանակէլ)

Ք Ա Ղ Ո Ւ Ա Ծ

Շ Ա Բ Ա Թ Ա Կ Ա Ն Լ Բ Ո Յ

Նոյեմբ. 21 էն 27

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Օրուան կարեւորագոյն քաղաքական լուրն
է Ֆրանսական Հանրապետութեան նախա-
գահի փոփոխութիւնը : Պ. Ժիւլ Կրէմի-
Վիլսօնեան գալթակղութեամբ յառաջ ե-
կած ծանուցեալ զէպքերուն եւ նախարա-
րութիւն մը կազմելու անհնարութեան առ-
ջեւ՝ անխուսափելի նկատելով իւր հրաժա-
րումն, յայտարարութիւն մը ուղղեց առ
Խորհրդարանն, յայտարարելով թէ «Պարտ
եւ իրաւունք ունէի մնալու, այլ գծու-
թեան մ'առաջքն առնլու համար. խոհե-
մութիւնս և հայրենասիրութիւնս խորհուրդ
կուտան ինձ տեղի տալ : Պատասխանա-
տուութիւնը կը թողում անոնց վրայ որք
յանձն կ'առնուն զայն» :

Դեկտ. 31ին (Ն. Տ.) վեհաժողովը (Մե-
րակոյտ և Երեսփ. Ժողով միացեալ) ի նիստ
գումարուելով ի վէրսայլ, նախագահական
ընտրութեան ձեռնարկեց. առաջին քուէ-
արկութեան մէջ շահեցան՝ Պ. Պ. Սատի
Քառնօ 305 քուէ, Ժիւլ Ֆէրրի՝ 212, Զօր.
Սօսիէ՝ 148, Պ. տը Ֆ. Եսինէ՝ 76, Զօր. Ա-
բէն՝ 72, զանազանք 58 քուէ : (Քուէար-
կուաց թիւն էր 849, հետեւաբար բացար-
ձակ մեծամասնութիւն՝ 425) : Պ. Պ. Ժիւլ
Ֆէրրի եւ տը Ֆրէսինէ նախագահական
ընտրելութեան ետ կեցած լինելով ի նը-
պաստ Պ. Սատի Քառնօի, երկրորդ քուէ-
արկութեան մէջ 616 քուէով Ֆրանսական
Հանրապետութեան նախագահ ընտրուեցաւ
Պ. ԱՍՏԻ ՔԱՌՆՕ :

Դորընտիր նախագահը ծնած է ի Լիմօզ,
1857ին, և հետեւապէս ծեր չէ. իւր պապն
է Քօնվանսիօնի յեղափոխական ժողովոյն
մեծանուն անդամն Կոմս Քառնօ եւ իւր
հայրն, Լազառ Քառնօ, եղաւ կրթական
նախարար 1848ի յեղափոխութենէն ետքը :

Պ. Սատի Քառնօ բազմաթուստեան ու-
սումնարանը մտաւ 1857ին, իբրեւ հինգե-
րորդ աշակերտ, եւ յետոյ ճարտարագի-
տական ուսումնարանն իբրեւ տոպիկ ա.
շակերտ : 1865ին ելաւ առաջնակարգ, եւ
անուանեցաւ քաղաքային ճարտարագէտ
1871ին եղաւ նահանգապետ Ստորին Սէ-
նի, եւ արտասովոր պատուիրակ ի կազ-
մակերպութիւն ազգային պաշտպանութեան
Ստորին Սէնի, Էսօի եւ Քալվատոյի երեք
նահանգներուն մէջ : 1871 փետրուարին
Քօդ. տ'Օսի երեսփոխան ընտրեցաւ Ազ-
գային Ժողովոյն, 41.711 քուէով, և հան-
րապետական ձախակողմին յարեցաւ, ո-
րոյ բարտուղար եղաւ : Հանրապետութեան
վերջնական հաստատման միտող ամեն տնօ-
րինութեանց ի նպաստ քուէ-տուաւ : 1876ի
ընդհանուր ընտրութեանց միջոցին վերընտ-
րեցաւ, եւ 1877 մայիսին յարեցաւ 565
հանրապետական երեսփոխաններուն, որք,
վստահութեան քուէ զլանալով Պրոյլի Դքսի
նախարարութեան, տապալեցին զՄարէշալ
Մաք Մահօն, Պ. Կրէմիի նախորդը :

Պ. Սատի Քառնօ նշանաւոր հանդիսա-
ցած է հանրօգուտ շինութեանց վերաբեր-
եալ վիճարանութեանց մէջ, մանաւանդ ի
մասին երկաթուղեաց, ներքին նաւարկու-
թեան, և ինչ Քանիցս անդամ եղաւ ելը-
տացոյցի յանձնաժողովոյն, եւ 1878ին ընտ-

ընդամենը տեղեկարար հանրային շինութեանց նախարարութեան երկտնային : Նոյն տարին եղաւ խորհրդական նոյն նախարարութեան : 1880 սեպտեմբերին , Պ . Սատրիֆառնո անուանեցաւ հանրագումար շինութեանց նախարար , զոր վարեց ցկաղմութիւն Պ . Կամպէզդզայի « մեծ նախարարութեան » , 1881 նոյեմբեր : 1886ին Պ . Պրիստինի նախարարութեան մէջ , երկտնական նախարար եղաւ , իրեն պաշտօնակից ունենալով Պրէսիտին , Կոպլէ , Սլէյն-Դարժէ , Հէրվէ Մանկոն : Պ . Սատրիֆառնո ի Քրանսերէն թարգմանած է անգլիացի երեւելի տնտեսագէտ եւ իմաստասէր Պ . Սքուարդ Միլլի գիրքն ի պաշտօնականութիւն 1848ի յեղափոխութեան :

Պ . Սատրիֆառնոյի հայրն ողջ է , և Մեքսիկային մէջ կը բազմի :

Իբրեւ երկտնական նախարար , Պ . Սատրիֆառնո հակառակած էր Պ . Վիլսոնի չհաղիտական ձեռնարկներուն , որք կը վշտանային պետական գանձուն :

Պ . Սատրիֆառնո՞ նոր նախարարութիւնը կազմելու պաշտօնն յանձնած է Պ . Ունէ Կոպլէի :

Ն Ե Ր Ք Ի Ն

Գոհութեամբ կը ծանուցանենք թէ Քրանսական կառավարութիւնը Պարսկաստանի պատուանշանի սպայութեան աստիճանը նուիրած է Բ . Իրան իրաւագէտ խորհրդական Նորատունկեան Վսեմ . Գարրիէլ Էֆէնիին : Կայս . Իրաքէ մը արտօնած է այդ պատուանշանի գործածութիւնը :

— Պ . Լ . Սիֆէլտէր ծանուցած է Բարձր . Մեծ-Եպարքոսին՝ թէ իւր ներկայացուցած դրամատեարց խումբը չ'ընդունիր կայսերական կառավարութեան առաջարկած բարեփոխումներն , եւ հետեւաբար ետ կը բաշխուի :

Պ . Սիֆէլտէր մի եւ նոյն զեկուցումն ըրած է նաեւ Հանրագումար շինութեանց նախարարութեան :

— Ներքին գործոց նախարարութիւնը տեղեկանալով որ ի Տրասիլոն եւ ի չըջակայս արջառաց մէջ տարափոխիկ հիւանդութիւն մ'երեւան ելած է , հեռագրաւ ծանուց տեղւոյն կուսակալութեան՝ արգիլել արջառաց այլուր փոխադրութիւնը :

— Նախընթաց որ իւր պաշտօնատեղին ուղեւորեցաւ Վաշինկթընի օսմանեան գեսպանատան նորընտիր առաջին քարտուղար Նորիկեան Մկրտիչ Էֆէնիին :

— Շարժում մէջ մայրաքաղաքս հասան Ռուսաստանի նշանաւորագոյն արուեստագէտներէն երկուքն , Տիլնայը իննս Կարգանեան Գառեալ , որ հօշակ հանած է ամբողջ Եւրոպայի մէջ եւ Գերմանիոյ Վեհ . Կայսեր պալատական երգչուհին անուանելու պատիւն ունեցած է , եւ Նախալի Գալինովի , Ռուսիանդայի աշակերտուհի , որ Մոսքուայի երաժշտական համալսարանէն ստացած է առաջին մրցանակ եւ Հանս Փոն Պիւլով զերման արուեստագէտէն յորջորջուած է « առաւ » դաշնակահարաց թագուհին » : Այս երկու ականաւոր արուեստագէտները մօտեքս պիտի տան մի քանի նուագահանդէսներ :

Տիլին Գալինովի կը պատկանի ռուս ցեղին , այլ Տիլին իննս կամ Նուիկ Կարգանեան Տիլիսիցի Հայուհի մ'է , դուստր Կարգանեան հայ գորպայետին որ թողած է

փայլուն անուն մը Կովկասի զինուորական տարեգրութեանց մէջ :

— Վոսիորի ասիական եղբայր բնակչաց առատ անուշ ջուր մատակարարելու համար « Կ . Պոլսոյ ջրի Ընկերութիւնը » վերջին օրերս բնեւ տուած է Քիլէի մօտ գտնուած Տիլիս գետակին ջուրը : Ձեռնհաս անձանց կարծեաց նայելով , որք մանրախոյզ կերպիւ տարրալուծած են զայն , այդ ջուր անուշահամ եւ առողջարար է : Անգամ մը որ գետակին ընթացքը փոխուի , 150,000 բընակչաց պիտոյից բաւելու չափ ջուր պիտի բերուի : Այս նպատակաւ կատարելի աշխատութեանց եւ ջուրը Գառեգիւղի բնակչաց ալ բաշխելու ըմբար յարջ 300,000 ոսկոյ ծախսուց պէտք կայ : Օրական 8 Էն 10,000 խորանարդ մեղր ջուր պիտի կրնայ մատակարարուի :

— Մէտաժըրի Մարիդիմ ընկերութիւնն արտօնութիւն խնդրած է Բեդրսպուրիի կառավարութեանէն՝ չոգենաւային կանոնաւոր երթեւեկութիւն մը հաստատել ընդ մէջ Սեւ ծովու եւ Միջերկրականի նաւահանգստաց , կեդրոն ունենալով Օտեսա : Ընկերութիւնը յանձն կ'առնու այդ պարագային մէջ հպատակիլ ռուսական օրինաց եւ իւր չոգենաւները բանեցնել ռուսական դրօշակներով , մրցելու համար աւստրիական եւ անգլիական ընկերութեանց հետ : Վառնայի եւ Սելանիկի մէջ գործակալութիւններ պիտի հաստատուին :

— Պրանսական դրամատան մը հովանաւորութեան ներքեւ կազմեալ դրամատեարց խումբ մը կայս . կառավարութեանէն արտօնութիւն կը խնդրէ մոմի եւ օճառի մեծ գործարան մը հաստատել ի Կ . Պոլիս :

— Խարիճիլէի արարողագետի օգնական Ղալիպ պէյ , որ միանգամայն ներքինապետ Բարձր . Շէրէֆէտտին աղայի մասնաւոր քարտուղարն էր , հրաժարեք է այդ պաշտօնէն :

— Վեհ . Սուլթանը տեղեկանալով որ Եհնիշ-Կիլիսի երեւելիներէն Բասիմ պէյ , որ մայրաքաղաքս գալթած է , թշուառ վիճակի մը մէջ կը գտնուի , հրամայած է որ 1,500 զրուշ ամաթոյակով պաշտօնի մը կոչուի մաքսատան մէջ :

— Պ . Վանտէրպիլդ , միլիառաւոր ամերիկացին , որ իրաւամբ յորջորջուած է « Երկաթուղեաց թագաւոր » , հինգշաբթի օրը ընտանեօք մայրաքաղաքս հասաւ իւր Ալեքանուն գեղեցիկ զրօսանաւով :

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

Կրօնական Ժողովն իւր չորեքշաբթի աւուր արտասովոր նստին մէջ , որ տեղի ունեցաւ ընդ ատենապետութեամբ Դիմաքսեան Գեր . Հմայեակ Եպիսկոպոսի , զբաղեցաւ նաեւ հետեւեալ խնդիրներով .

1. Ի պատասխանի Ժողովոյ գրոյն , զոր Ձմիւռնոյ գերեզմանատան խնդրոյն առթիւ ուղղած էր առ Ս . Առաջնորդն վիճակին , տեղւոյն քաղաքական ժողովը նամակաւ մը պատասխանած էր . սակայն Ժողովն որոշեց գրել թէ Ս . Առաջնորդին պատասխանին կ'սպասէ եւ ո'չ թէ քաղաքական ժողովոյ :

2. Ժողովը նկատողութեան առաւ Եւրոպիոյ առաջն . Տեղապահ Այվաթեան Արժ . Սահակ վարդապետի մէկ հեռագիրն որով կը ծանուցանէր թէ խումբ մը մարդիկ , միանալով տեղւոյն կրօնական ժողովին , առաջնորդարան խումբ մը ու յուզմանց տոնիթ տուած էին և անմիջապէս հեռագրեց

որ խնդիրը մանրամասնօրէն տեղեկագրէ և սպասէ Պատրիարքարանի հրահանգին :

3. Ժողովը նկատողութեան առաւ Կիլիկիոյ Ամեն . Ս . Կաթողիկոսի մէկ գիրն որով պատասխանելով իւր վերջին գրոյն , կը յայտարարէ թէ կրօնափոխութիւնը լրագրական հրատարակութեանց չափ չեն եւ թէ Այնթապ , Հաճըն , Մարաշ եւ Հալէպ նոյն վիճակին մէջ են ինչ որ էին առաջ . իսկ Ատանայի մասին կը լսուի թէ , կը յարէ Ն . Ս . Ամենապատուութիւն , ազգայինք ոմանք ի պատճառս սովոր առ կարօտութեան կըրօնափոխութեան դիմելու փորձեր կ'ընեն : Ս . Կաթողիկոսը ծանուցանելէ յետոյ թէ Վեհապետեան Գեր . Մկրտիչ Եպիսկոպոս Ատանա գտնուելով կը գործէ ի հոգեւոր միաբնակութիւն ժողովրդեան , մասնաւորապէս կը գանգատի միսիօնարաց հակամարդկային ընթացից դէմ որք ժողովրդեան աղքատութենէն օգտուիլ կ'ուզեն :

— Միացեալ ընկերութեանց Տնօրէն Ժողովոյ Ատենապետ Մեծ . Գառնիկ Էֆ . Յովակիմեան իւր առևտրական գործոց պատճառաւ վերջնապէս Մանչէսթըր հաստատուած լինելով , կ'իմանանք թէ Միացեալ ընկերութեանց Տնօրէն Ժողովոյ Ատենապետ ընտրուեք է Վսեմ . Լեւոն պէյ Փափաքեան :

Գահութեամբ կը յիշատակենք այս արժանաւոր ընտրութիւնն եւ տարակոյս չունինք թէ Միացեալ ընկերութիւնը , որպէս յանցելումն , յառաջիկային մէջ եւս մեծապէս պիտի օգտին գործունէութենէն , Վսեմ . Լեւոն պէյի որ երկարժամանակեայ փորձառութիւն եւ հմտութիւն ունի Ընկերութեան գործոց մասին :

— Մշոյ խումբ ժողովոյն կողմէ ի Պատրիարքարան հասած հեռագիր մը կը ծանուցանէ թէ տեղւոյն նորընտիր Վանահայր-Առաջնորդի պաշտօնը ցարդ վաւերացած չլինելով , վիճակին ազգային գործերն երեսի վրայ մնացած են և ընդ փոյթ տընօրինութիւն մ'ընել կը խնդրէր :

Այդ . Պատրիարքարանի կողմէ հեռագրաւ պատասխանուելով՝ ծանուցուեցաւ Մշոյ խումբ ժողովոյն թէ՝ Մուրատեան Արժ . Յովհաննէս վարդապետ փոխանորդարար պիտի վսրէ այդ պաշտօնը ցնոր տնօրինութիւն :

Այս տնօրինութիւն հեռագրաւ հաղորդուեցաւ նաեւ Տ . Յովհաննէս վարդապետին : Նորընտիր Վանահայր-Առաջնորդն՝ Գեր . Գարեգին Եպիսկոպոս Սրուանձտեանց՝ հրապարած է այդ պաշտօնէն եւ Մուշէն Կարին ուղեւորած և անտի եւս մեկնած է ի Տրապիզոն :

— Վենետիկի Միթիարեան միաբանութեան արքահայր Գեր . Իգնատիոս Արքեպիսկ . Կիւրեղեան , որ Տրապիզոն և Խրիմ այցելած էր , մայրաքաղաքս վերադարձաւ :

— Իզմիրի գերեզմանատան մէջ խանութներու շինութիւնն արգիլուեք է Կուսակալին հրամանաւ , որ ի խնդրոյ ընդհ. գատախաղին , ծանուցեք է քաղաքապետութեան թէ գերեզմանատան մէջ չ'ենք կառուցանելու համար նահանգային վարչական ժողովոյն արտօնութիւնն հարկաւոր է :

— Անգլիոյ հայ գաղթականութիւնն ուղերձ մը դրկելով առ Ամեն . Տ . Յարութիւն Ս . Պատրիարքն , ցաւ յայտնած է Ն . Սքրաքաղնութեան հրաժարման համար :

— Վանէն մայրաքաղաքս հասած նամակներ կը հաղորդեն թէ Տ . Արսէն վարդապետ Թոխմախեան և Կիլիսեան անուանով մի երկտասարդ Հէքեարիկ մէջ ձերբակալուելով Վան տարուեք են :

Guerlain de Paris.

15, Rue de la Paix.

ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԿԸ ՅՈՆՁՆԱՐԱՐԵՆՔ ՀԵՏԵԻՆԱԼ ՀՈՏԱԻՏ ՆԻԻԹԵՐԸ Eau de Cologne Impériale. Sapoceti, օճառ արգելադարի համար Ambrosial cream, օճառաւոր քուէ՝ ածիւ-
ւող մարդու համար. Crème de Fraises մարմնի կակուղեցնելու համար. Poudre de Cypris
զովացնելու եւ ձերմկցնելու համար մորթի. Stilboideփայլ ապուր համար մազերուն եւ մորու-
քին. Eau Athénienne et Eau lustrale հոտ խնկելու եւ մաքրելու համար գլուխը. Alcoolat
de Cochlearia ախաշներու համար. Eau de Chypre արգելադարի համար. Թաշկինակի հա-
մար հոտաւէտ իւրթեր՝ Héliotrape, Pao Rosa, Shore's caprice, Maréchale Duchesse, Ma-
rie Christine. Imperial Russe.

977

13—29

ՓԱՌՍԿԱԶՄ ՕՐԱՑՈՅՑՔ

Կ'ուզէ՞ք ունենալ Նոր Տարւոյն համա-
ռօտ եւ ընդարձակ Օրացոյցն, պարզ կամ
ոսկէզօծ, թաւշեայ կամ մետաքսեայ, նախ-
շուէն, քնքուշ ու փառաւոր:

Կաղանդի համար կաշէկազմ, ոսկէզօծ
եւ զարդարուն աղօթագիրքեր: Պատի Օ.
րացոյցներ մեծադիր կամ մանրիկ:

Դիւնեցէք Չաքմաքըճլար-Նօգուշ, թիւ 51
Վ. Սրտանեան եւ Եղբարց գրատունը:

Գաւառական յանձնարարութիւնը խը-
նամով կը կատարուին:

Հրատարակուեցաւ
ԸՆԴԱՐՁԱԿ

ՕՐԱՑՈՅՑ

1888

ՏՊԱՐԱՐՈՒԹԻՒՆ Գ. ՊԱՆՏՈՒՆԵԱՆ

Կը պարունակէ բաց ի տոմարական գիտելիքնե-
րէ՝ Ժամանակագրութիւնը. — Աղիւսակ դրամոյց գըլ-
խաւոր ազգաց. — Ամանունը. — Անունը Օսմ. կայ-
սերաց. — Աւագանի կայս. — Պալատի. — Նախա աղ-
թ. — Դրան. — Մեծ պաշտօնատար. մայրաքաղաքիս. —
Հրամանատար. բանակաց. — Պետական խորհուրդ. —
Արդարութեան եւ կրօն. գործոց նախարարութիւն. —
Մաքսատունը. — Կուսակալը. — Նախագահ. — Պատ-
րիարքութեան եւ Ազգայնութ. — Օսմանեան դեսպանը.
— Դեսպանը եւ հիւպատոսը օտար տերութեանց ի
կոստանդնուպոլիս. — Արձակագրութիւն օսմանեան
կոստանդնուպոլիս. — Հայ ազգի պաշտօնատար. եւ
աստիճանաւոր. — Հայրապետութիւն հայոց. — Կախ-
կապութեան. — Աղ. Կեդրոնական Վարչութիւն. —
Յանձնաժողով. — Պաշտօնեայ պատրիարքարանի. —
Առաջնորդութիւնը թուրքիոյ եւ թեմը. — Հովու-
թիւնը. — Մայրավանդ. թուրքիոյ. — Թաղապար. Կ.
Պոլսոյ. — Համագումար թաղապար. — Բարեգործ. եւ
կրթ. հաստատութիւնը. — Առաջնորդութիւնը ի
Ռուսաստան եւ այլն. — Մայրավանդ ի Ռուսաստան
եւ այլն. — Կայսերական գերդաստան Ռուսիոյ. — Հայ-
ազգի աստիճանաւոր. եւ պաշտօնատար. Ռուսա-
կան տերութեան. — Նոյն, Պարսկական տերութեան.
— Նոյն, այլ եւ այլ տերութեանց. — Հռովմէական
հայ հասարակութիւն. — Բողոքական հայ հասարա-
կութիւն. — Յուդեական պաշտօնեայ. — Դասա-
տուր. պետական ուսումնարանաց. — Բժիշկ քաղաքա-
յին եւ գիւղական. — Փաստաբանը. — Արուեստա-
գետը. — Լրագիրը. — Հեռագրութիւնը թուրքիոյ եւ
միջազգային. — Միջազգային թղթատարութիւն. — Եւ-
րոպական նամակատու. — Յամաքային թղթ. ասիա-
կան թուրքիոյ. — Ժամանակացոյց Օսմ. Միջ. թղթ.
— Աղ. — Մանուկներ:

Գինն է 3 դահեկան

Կեդրոնատեղին է Գ. Պաղտատլեան գը-
տտուն, Յակոբեան խան թիւ 13:

ՏՅԶԶ

3—6

ՏԱՐԵՑՈՅՑ ԽԻԿԱՐԻ

1888

Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ

Կը պարունակէ Դազամիա, զաւեշ-
տական Օրացոյց եւ զուարճալիք:

Գին 50 փարա

1319

5—5

ԱԶԴ

Խախտեալ Մահու զաւեշտաթերթի
արտօնատէր Գէորգ Էֆէնտի Ս. Վաղ-
եան՝ Միտիլլիէն ընտիր ձեռնաւոր եւ
օճառ, Թէնտոսէն պատուական գինի
եւ Իզմիրէն ընտիր օղի բերել տուած է,
եւ աժան գնով կը վաճառէ Ղալաթիա
Բէնջէնպիհ-բազար, Իփսի խան:

Մինչեւ ցարդ Ս. Վաղեան Էֆէնտի
յիշեալ վաճառատունը դիմողը յոյժ
գոհ եղած են ապրանաց ընտիր տե-

սակէն եւ գնոց չափաւորութենէն.
Սյս օրերս լաւագոյն ապրանքներ
հասած են. 1318 4—15

Վասն Սրտանեան
Տնօրէն-Պատասխանատու
Բ. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱՐԱՐ. ԱՐԵՒԵԼՔ ԵՒ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐԱՅ



ՄԼՏԵՄ Ս. Ա. ԱԼԼԵՆԻՆ

ԵՇԽԵՐՇԵՆՈՒՆՈՒՄ ՄԼՁ. ՆՈՐՈԳԻՏԻՆ
(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER)

Ճերմակ ընկած մազերուն գոյն, վերնիճ ու գեղ
կուտայ: Կը նորոգէ անոր կեանքը. զոյժ եւ աճուի:
Գլխու թեփը շուտ մը անկրկնելի կ'ընէ: Իր անուշ
հոտը առատ է ու հեշտալի:

“Մէկ շիշ կը բաւէ:” Եւ փորձը ունեցան
ամենքը որոնցմոխրագ ունած մազերը իրենց բնական գոյ-
նին դարձան, եւ ճաղատ տեղերը մազով ծածկուեցան:

Կերկ չէ, եւ ամենէին զեան մը չընէ: Թէ որ կ'ուզես թարմ մազ ունենալ եւ բոլոր
կենացդ մէջ պահել, առանց ուշանալու շիշ մը ստացիր ԳԼՔՆԻՆ Ս. Ա. ԱԼԼԵՆԻՆ համաշ-
խարհական հայր Նորոգիչն. (MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)

Գլխաւոր միջերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row).
Նոյնպէս Բարիք ու Նիու Եօրք: Կը վաճառուի սափրիչներու, անոյշ իւղա-
գործներու եւ անգղիացի դեղագործներու քով:

Կը գտնուի Ն. եւ Ժ. Գանդիլը եղբարց բրիտանական դեղարանը, Բերա, Մեծ
փողոց. Էտմընտ Բարուան. Անգլիական միջերանոց, Նիւքսէք Գալալըրմ. եւ Իզի-
տօ՝ Լոպ անտէլլա 455, Բերա մեծ փողոց:

ՀԵՐԱՄԵՆԵԿԸՆ ԴԵՂԱԿԵՓՈՒՆԸ
ԳԵՂԱՅԵՐԵՐՈՒՆՈՂ ՄԼՔՈՒՆՅ ԳՈՅՆԸ, ՄԼՔՏ
ԴԵՂԱԿԵՓՈՒՆ, ՄԼՔՏ ԹԵՐՄ:

Ընդամուսն մը փորձը պիտի համոզէ ամեն Տիկին թէ որչափ
գերազանց է այս ուրիշ ամեն հեղանիւթներէ եւ բազմաթիւ փոշի-
ներէ: Երաջան անգամ գործածելով ալ որ քանի
մը վայրկեանի գործ է, պիտի տեսնուի իսկոյն որ
երեսը, վիզը, թեւերը եւ ձեռքները պիտի առ-
նուն անոյշ փափկութիւն մը եւ մարմարիոնի
փայլ, հանդերձ շուշանի եւ վարդի գունով եւ
բուրմամբ: Սապոնի գրգռիչ յասկութիւնները
կը հանգարտեցունէ: Ընհետ կ'ընէ մորթի սեւեւը, երեսի եւ ձեռքի ցանկերը, արեւա-
րուբը, եւ ուրիշ ամեն բրտութիւն եւ բծաւորութիւն: Եւ այս ամեն բանով անկարելի
կ'ընէ մատուցիլ թէ արհեստով դեղեցկացուած է:


Գլխաւոր միջերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Նոյնպէս
Բարիք ու Նիու Եօրք: Կը վաճառուի սափրիչներու, անոյշ իւղագործներու եւ
անգղիացի դեղագործներու քով:

Կը գտնուի Ն. եւ Ժ. Գանդիլը եղբարց բրիտանական դեղարանը, Բերա, Մեծ
փողոց. Էտմընտ Բարուան. Անգլիական միջերանոց, Նիւքսէք Գալալըրմ. եւ Իզի-
տօ՝ Լոպ անտէլլա 455, Բերա մեծ փողոց:

Կը համարտեցունէ: Ընհետ կ'ընէ մորթի սեւեւը, երեսի եւ ձեռքի ցանկերը, արեւա-
րուբը, եւ ուրիշ ամեն բրտութիւն եւ բծաւորութիւն: Եւ այս ամեն բանով անկարելի
կ'ընէ մատուցիլ թէ արհեստով դեղեցկացուած է:

Գլխաւոր միջերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Նոյնպէս
Բարիք ու Նիու Եօրք: Կը վաճառուի սափրիչներու, անոյշ իւղագործներու եւ
անգղիացի դեղագործներու քով:

Կը գտնուի Ն. եւ Ժ. Գանդիլը եղբարց բրիտանական դեղարանը, Բերա, Մեծ
փողոց. Էտմընտ Բարուան. Անգլիական միջերանոց, Նիւքսէք Գալալըրմ. եւ Իզի-
տօ՝ Լոպ անտէլլա 455, Բերա մեծ փողոց:



Իրապէս իրենց առջի թարմ գոյնին կը դարձունէ ճերմակած կամ գունաթափ
մազերը. Կը դարբեցունէ անոնց թափելը. Կը մաքրէ գլուխը, կը վերջացունէ
թեփը, ու մազերուն նոր կեանք, աճումն, փայլ ու գեղեցկութիւն կուտայ:

Կը վաճառուի երկու չափով մեծ շիշերու մէջ:
Գլխաւոր միջերանոցը Լոնտոն է (114 and 116, Southa lpton Row). Նոյնպէս
Բարիք ու Նիու Եօրք:

Կը գտնուի Ն. եւ Ժ. Գանդիլը եղբարց բրիտանական դեղարանը, Բերա, Մեծ
փողոց. Էտմընտ Բարուան. Անգլիական միջերանոց, Նիւքսէք Գալալըրմ. եւ Ի-
զիտօ՝ Լոպ անտէլլա 455, Բերա մեծ փողոց: